ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-742-18.09.2020-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի մարտի 4-ի ՀՕ-97-Ն օրենքի 7-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«*Հոդված 7. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ*

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի ապրիլի 1-ից:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերը համապատասխանեցվում են սույն օրենքի պահանջներին մինչեւ 2021 թվականի ապրիլի 1-ը:

3. Ինտեգրված սոցիալական ծառայությունների պետական գրասենյակի քաղաքացիական ծառայության պաշտոնները մինչեւ օրենքով սահմանված մրցութային կարգով զբաղեցնելը՝ կարող են զբաղեցվել ժամկետային աշխատանքային պայմանագրով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Երկրորդ ընթերցում

Առաջին ընթերցում

Կ-742-18.09.2020-ԱՍ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի մարտի 4-ի ՀՕ-97-Ն օրենքի ~~(այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի «ինտեգրված սոցիալական ծառայությունների պետական գրասենյակի» բառերը փոխարինել «համալիր սոցիալական ծառայության» բառերով;~~

~~***Հոդված 2.*** Օրենքի~~ 7-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«*Հոդված 7. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ*

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի ~~հունվարի~~ ապրիլի 1-ից:

2. Սույն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերը համապատասխանեցվում են սույն օրենքի պահանջներին մինչեւ 2021 թվականի ~~հունվարի~~ ապրիլի 1-ը:

3. ~~Համալիր սոցիալական ծառայության~~Ինտեգրված սոցիալական ծառայությունների պետական գրասենյակի քաղաքացիական ծառայության պաշտոնները մինչեւ օրենքով սահմանված մրցութային կարգով զբաղեցնելը՝ կարող են զբաղեցվել ժամկետային աշխատանքային պայմանագրով:»:

Հոդված 23. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Կ-742-18.09.2020-ԱՍ-011/0*), «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(Կ-742[1]-18.09.2020-ԱՍ-011/0),* «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(Կ-742[2]-18.09.2020-ԱՍ-011/0),* «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *Կ-(742[3]-18.09.2020-ԱՍ-011/0),* «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *(Կ-742[4]-18.09.2020-ԱՍ-011/0)* նախագծերի փաթեթի ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության, փոփոխության (լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը փոփոխությունը(լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի(հիմնական զեկուցողի եզրակացությունը)**	**Առաջակությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
ՀՀ ԱԺ պատգամավոր ԱՐՏԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ	«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Կ-742-18.09.2020-ԱՍ-011/0*),	**Հանել նախագծի 1-ին հոդվածը:**	Ընդունվել է: «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծից 1-ին հոդվածը հանվել է: խմբագրվել է և ըստ այդմ՝ Միաժամանակ Նախագծերում, գրասենյակի ստեղծման առանձնահատկություններից ելնելով,	Ընդունվել է:

			կատարվել է ժամկետի երկարաձգում՝ 2021 թվականի հունվարի 1-ը փոխարինելով ապրիլի 1-ով:	
ՀՀ ԱԺ պատգամավոր ԱՐՏԱԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ	«ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *Կ-742[1]-18.09.2020-ԱՍ-011/0,*	*Առաջարկում եմ նախագծերի փաթեթից հանել* «ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ *Կ-742[1]-18.09.2020-ԱՍ-011/0 նախագիծը*	Ընդունվել է:	Ընդունվել է: